ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐԴԳԵԶ ԳԱՍՊԱՐԻԻ ԳՈՐԾՈՎ

22.03.2016 17:11

Վարդգեզ Գասպարին հրապարակային կերպով սոցիալական ցանցերում վիրավորանքներ է հասցրել հանրային պաշտպաններին, այն բանի համար, որ հանրային պաշտպանի գրասենյակը քրեական գործով հանրային պաշտպաններով էր ապահովել Վարդգեզ Գասպարիին:

Այս կապակցությամբ պարզաբանում ենք հետևյալը՝

Հանրային պաշտպանի գրասենյակը քրեական գործերով հանրային պաշտպան տրամադրում է միայն վարույթն իրականացնող մարմնի (այդ թվում՝ դատարանի) որոշման հիման վրա:

Հանրային պաշտպանի գրասենյակը երեք անգամ ստացել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումներ, որոնցով դատարանը գտել է, որ «Վարդգես Լիվանի Գասպարիին պետք է ազատել իրավաբանական օգնության վճարից և դիմել ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակին՝ պաշտպան նշանակելու համար..»:

Հանրային պաշտպանի գրասենյակը պարտավոր էր ի կատարումն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի ՝ տրամադրել գործը հանրային պաշտպանին, ինչը և կատարել է- գործը հանձնվել է հանրային պաշտպան Մերի Ալավերդյանին, այնուհետև՝ Լյյուդվիգ Ավետիսյանին և Լիանա Գասպարյանին:

Նշված երեք հանրային պաշտպանները կարող էին պաշտպանի իրավիճակ ձեռք բերել Վարդգեզ Գասպարիի համաձայնությունը ստանալու պահից միայն: Այդ մասին բազմիցս և գրավոր և բանավոր պարզաբանվել է Վարդգես Գասպարիին:

Վարդգեզ Գասպարին հրապարակավ սոցիալական ցանցերում անձնական վիրավորանքներ է հնչեցնել հանրային պաշտպաններ Մերի Ալավերդյանի և Անժելա Հոբոսյանի հասցեին նրանց պատիվն ու արժանապատվությունը վիրավորող մեկնաբանություններ անելով: ՀՊԳ ղեկավարը գրավոր և բանավոր հորդորել է Վարդգեզ Գասպարիին զերծ մնալ հանրային պաշտպաններին վիրավորանքներ հասցնելուց:

Սակայն Վարդգեզ Գասպարին շարունակել է հրապարակավ հանրային պաշտպաններին վիրավորանքներ հասցնել, ավելին՝ դատարանի միջանցքում և դատական նիստերի դահլիճում հրապարակավ վիրավորանքներ է հասցրել հանրային պաշտպաններ Լյուդվիգ Ավետիսյանին և Լիանա Գասպարյանին:

Հարգելի Վարդգեզ Գասպարիի

Հանրային պաշտպաններ Մերի Ալավերդյանը, Լյուդվիգ Ավետիսյանը և Լիանա Գասպարյանը կատարել են իրենց մասնագիտական պարտականությունը և ներկայացել են դատարան օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարումն ապահովելու նպատակով:

Հանրային պաշտպանի գրասենյակը իրականացրել է մի քանի տասնյակ հազար քաղաքացիների պաշտպանություն քրեական գործերով, տասնյակ հազար քաղաքացիների իրավաբանական օգնություն է տրամադրել քաղաքացիական և վարչական գործերով:

Ձեր իրավունքն է Ձեր ընտրած դատապաշտպանների միջոցով պաշտպանելու Ձեզ օրենքով սահմանված կարգով, օգտվեք Ձեր իրավունքից :

Դուք հայտարարում եք, որ պայքարում եք անօրինականության և ապօրինությունների դեմ: Ուրեմն բարի եղեք հարգել այն ինստիտուտը և այն անձանց, ովքեր

գերծանրաբեռնված ռեժիմով ՀՀ բազմահազար անվճարունակ քաղաքացիների շահերն են պաշտպանում և ներկայացնում:

Եթե դուք պաշտպանում եք մարդու իրավունքները ապա հարգեք դիմացինի արժանապատվությունը, մի վիրավորեք հանրային պաշտպաններին:

Կրկին հորդորում ենք Ձեզ զերծ մնալ հանրային պաշտպաններին վիրավորանքներ հասցնելուց:

Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար

Մելանյա Առուստամյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })